

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՏՀՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/13-1**

ք. Երևան

«13» հունիս 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ և «ԳՅՈՒՄՐԻԻ ՎԵՐԵԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ Կոնսորցիումն , «ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա.Նալբանդյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա ,ԳՅՈՒՄՐԻԻ ՎԵՐԵԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ-ն ի դեմս տնօրեն Լ.Վարդանյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Շիրակի մարզի Կառնուպի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները» (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՏՀՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/13 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Ֆինանսական միջոցներ նախարեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետը սահմանելով՝**

«ՀՀ Շիրակի մարզի Կառնուպի միջնակարգ դպրոցի», վերանորոգման աշխատանքներ՝ 155 օրացուցային օր

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.1.8 Կապալառուի կողմից Պայմանագրով սահմանված կանխավճարը Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակով օգտագործված չլինելու դեպքի հայտնաբերման դեպքում Կապալառուից պահանջել 5 օրյա ժամկետում Պատվիրատուին վերադարձնելու պայմանագրով նախատեսված նպատակով չօգտագործված կանխավճարի գումարը:

3.1.9 Առաջարկել Կապալառուին կասեցնել կամ համարել կասեցված պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի

արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել **10 օրվա ընթացքում**: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր ետղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուին իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.3.3 Առաջարկել Պատվիրատուին կասեցնել կամ համարել կասեցված պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:

3.4. Կապալառուին պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **առնվազն 365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Պատվիրատուին ներկայացնել կանխավճարի՝ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակային օգտագործումը հավաստող փաստաթղթերը՝ հաշիվ-պահանջագրերը, վավերագրերը, անդորրագրերը և այլն՝ Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 օրյա ժամկետում:

3.4.12 Բանկային երաշխիքի հետ միասին Պատվիրատուին ներկայացնել կանխավճարի օգտագործման պլանավորումը (ցանկ), որը ներառում է գնվելիք ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ ծախսերի անվանումները, քանակները և վճարման ենթակա գումարի չափը:

3.4.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կասեցվելու կամ կասեցված համարվելու դեպքում, եթե Պայմանագրի ժամկետի ավարտի օրը համընկնում է կասեցման ժամանակահատվածի հետ ներկայացնել ավելացված ժամանակահատվածի համար օրենսդրությամբ նախատեսված՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ դրամի ձևով ապահովումները՝ մինչև կասեցումը գործող պայմանագրային ժամկետի ավարտից առնվազն 10 օր առաջ, և եթե կասեցված ժամանակահատվածը չի գերազանցում Պայմանագրի մինչև կասեցումը գործող ժամկետը, ապա կասեցված ժամկետի ընթացքը վերսկսելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքստոլ փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 154,000,000 /մեկ հարյուր հիսունչորս միլիոն /<< դրամ, որից 25,666,666.67<< դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 46,200,000 (քառասունվեց միլիոն երկու հարյուր հազար) << դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կապալառուն ամբողջությամբ ապահովում է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում՝ տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում՝ կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի կողմից վճարված կանխավճարն օգտագործել Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակով: Միաժամանակ կապալառուն պարտավորվում է Պատվիրատուին բանկային երաշխիքի հետ միասին ներկայացնել կանխավճարի օգտագործման պլանավորումը (ցանկ), որը ներառում է գնվելիք ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ ծախսերի անվանումները, քանակները և վճարման ենթակա գումարի չափը:

Կապալառուի կողմից կանխավճարը Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակով օգտագործված չլինելու դեպքի հայտնաբերման դեպքում Պայմանագրով նախատեսված նպատակով չօգտագործված կանխավճարի գումարը ենթակա է վերադարձման Պատվիրատուին:

Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուին ներկայացնել կանխավճարը Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակային օգտագործումը (սարքավորումների, նյութերի ձեռքբերում, և այլն) հավաստող փաստաթղթերը՝ հաշիվ-պահանջագրերը, վավերագրերը, անդորրագրերը և այլն:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_9 = M_9 / N_9 \times K_9$, որտեղ՝

M_9 -ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է):

N_9 -ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

K_9 -ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

V_9 -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5

(գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Նախահաշվային գնի 0,05 % չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 0,1 % չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 0,1 % չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի

առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.17 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կարող է կասեցվել կամ համարվել կասեցված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացվելու դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների պայմանագրով սահմանված աշխատանքների կատարումն անհնար է դարձել: Սույն կետի իմաստով՝ կասեցվող ժամանակահատվածը որոշվում է Պատվիրատուի կողմից և դրա մասին կողմերի միջև կնքվում է համաձայնագիր:

Պայմանագրի կադարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝

«Շինարարության իրականացում» լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

Չափաբաժի ների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	Շինարարության իրականացում, 3-րդ և բարձր դասի լիցենզիա, ներդիրով ✓ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմեխանիկա) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր,

	ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ ջերմագազա-մատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր
--	---

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,

Կ.Ուլենեցու 31

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ _____

Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն

Սարգիս Բաղինյան



/ստորագրություն/
Կ.Տ
Անհրաժեշտության դեպքում
օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար» ՍՊԸ

ք. Գյումրի, Երևանյան խճ 20


Յունիբանկ Գյումրի մ/ճ

Հ/Հ 24103032125101

ՀՎՀՀ 05511545

Տնօրեն

Ա. Նալբանդյան



/ստորագրություն/
Կ.Տ
պայմանագրի մակագծում

«Գյումրիի վերելակային

տնտեսություն» ԲԲԸ

ք. Գյումրի, Կույբիշևի փող. 49

Ինեկոբանկ Գյումրի մ/ճ

Հ/Հ 2053122031231001

ՀՎՀՀ 05504189

Տնօրեն

Լ. Վարդանյան



/ստորագրություն/
Կ.Տ
կարող են ներառվել ՀՀ

« 13 » 06 Հավելված թիվ 1
2025թ. կնքված

ՀՏՀՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/13 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՀՀ Շիրակի մարզի Կառնուրի միջնակարգ դպրոցի» վերանորոգման աշխատանքների կատարման

NN	Նկարագրություն	Չ/մ	քանակ	Միավորի գին (դրամ)			Ամբողջի գին
				նյութեր	կատարում	ընդամենը	
			a	b	c	b+c	a*(b+c)
1	Համաշինարարական աշխատանքներ Совместные строительные работы						53,294,844.34
1	20սմ հաստության պեմզաբլոկների քանդում (6մ²) Снос пемзоблоков толщиной 20 см (6 м²)	մ3	1.20	10551.390		10,551.39	12,661.67
2	Նույնը, 10սմ հաստության պատերի (27մ²) /то же самое, толщина стен 10 см (27м²)	մ3	2.7	10551.390		10,551.39	28,488.75
3	Հախճասալերի քանդում պատերի վրայից (59,4+88,6) մ² Снос плитки со стен ((59,4+88,6 м²	մ2	148.0	825.640		825.64	122,194.72
4	Գաջե շերտի մաքրում (սենյակների մակերեսի 20%-ը խոնավացած) (147+232,0) մ² Очистка штукатурного слоя (20% поверхности помещения влажное) (147+232,0) м²	մ2	379.0	1073.330		1,073.33	406,792.07
5	Ընդհանուր պատերի ներկերի մաքրում (962,3+967,3) մ² Общий очистка стен от краски (962,3+967,3) м²	մ2	1929.6	484.380		484.38	934,659.65
6	Ընդհանուր առաստաղների ներկի մաքրում (բացառությամբ միջանցքի և նախամուտքի) (365+385,6) մ² Общее удаление краски с потолка (кроме коридора и входа) (365+385,6) м²	մ2	750.6	484.380		484.38	363,575.63
7	Վիպյտե և լամինատե հատակների քանդում ենթաշերտով Снос деревянных полов в классах с подложкой	մ2	503.5	635.000		635.00	319,722.50
8	Հատակների վինիլաիին ծածկույթների ներառյալ շրիշակները	մ2	56.5	203.660		203.66	11,506.79
9	Շրիշակների քանդում Снос лачуг	գմ	680.0	192.650		192.65	131,002.00
10	Քանդվող կերամիկական հատակի ենթաշերտով և այսական թասերի բարձր հատվածների և քանդում Снос керамического пола с подполом и снос высоких секций писсуаров	մ3	2.500	21137.120		21,137.12	52,842.80
11	Նույնը, H=5սմ (9,8մ2) То же, H=5см (9,8м2)	մ3	0.49	21137.120		21,137.12	10,357.19
12	Նույնը, H=20սմ (62,9մ2) То же, H=20см (62,9м2)	մ3	11.95	21137.120		21,137.12	252,588.58
13	Ասիական թասերի ապամոնտաժում Разборка азиатских писсуаров	հատ	12	2871.550		2,871.55	34,458.60
14	Լվացարանների ապամոնտաժում Демонтаж раковин и писсуаров	հատ	8	680.360		680.36	5,442.88

15	Սան. հանգույցների ՊՎՔ կախովի առաստաղների քանդում Сан. Демонтаж подвесных потолков ПВХ в стыках	մ2	57.0	1249.860		1,249.86	71,242.02
16	Պատուհանների ապամոնտաժում, շեպերի սվաղի քանդում (4 հատ) Демонтаж окон, снос штукатурки на фасадах (4 шт.)	մ2	24.0	2765.200		2,765.20	66,364.80
17	Դռների ապամոնտաժում, շեպերի սվաղի քանդում (37 հատ) Демонтаж дверей, снос штукатурки на фасадах (37 шт.)	մ2	103.3	1609.300		1,609.30	166,240.69
18	Պողպատե բազրիքների ապամոնտաժում Демонтаж стальных перил	զմ	42.0	646.020		646.02	27,132.84
19	Օդափոխության անցքերի բացում ծակերում Ф150մմ Открытие вентиляционных отверстий в отверстиях Ф150мм	տեղ	30	8268.090		8,268.09	248,042.70
20	Շին աղբի բարձում մեխանիզմով ա/ինքն. Վրա Строительство мусорной свалки с самогрузочным механизмом. На	տ	120.0	1435.000		1,435.00	172,200.00
21	Նույնը, ձեռքով То же самое, вручную	տ	10.0	990.770		990.77	9,907.70
22	Շին. աղբի տեղափոխում 3կմ Вывоз мусора 3 км	տ	130.0	1399.130		1,399.13	181,886.90
23	Միջնորմների շարվածք 400x200x100մմ թեթև բետոնե բլոկներից (79,9մ2) Перегородка из легкогобетонных блоков 400x200x100 мм (79,9 м2)	մ3	7.99	34294.860		34,294.86	274,015.93
24	Միջնապատերի շարվածք 400x200x200մմ թեթև բետոնե բլոկներից (4.1մ²)	մ3	0.82	27953.590		27,953.59	22,921.94
25	Շարվածքի ամրանավորում Усиление соединения	տ	0.108	81460.230		81,460.23	8,797.70
26	Ամրան А500С դասի (Ф8) Арматура класса А500С (Р8)	տ	0.05	381695.010		381,695.01	19,084.75
27	Ամրան А500С դասի (Ф10) Арматура класса А500С (Р10)	տ	0.058	402764.320		402,764.32	23,360.33
28	Կարանների փակում d=20մմ փրփրապատե ներդիրներով Закрытие клапанов пенопластовыми вставками d=20мм	մ2	7.6	566.170		566.17	4,302.89
29	Ամրանավորված անցքերի մեջ В12,5 դասի մանրախիճ բետոնի լցում Заполнение армированных отверстий гравийным бетоном марки В12,5	մ3	0.52	37769.440		37,769.44	19,640.11
30	Առկա բետոնե խճանկար հատակի երեսպատում մամլագրանիտե սալերով, սոսնձով Существующее напольное покрытие из бетонной мозаики с мраморно-гранитными плитами, с клеем	մ2	381.2	10423.080		10,423.08	3,973,278.10
31	Շրիշակներ մամլագրանիտե սալերից Н= (196զձմ) Гранитные плиты Н= (196 мм)	մ2	17.6	11741.540		11,741.54	206,651.10
32	Պերլիտաբետոնե ենթաշերտ Н=50-70մմ Перлитобетонное основание Н=50-70мм	մ3	34.86	35139.540		35,139.54	1,224,964.36

33	Մանրահատիկ բետոնե հարթաշերտ B20 դասի H=50մմ Плоский слой из мелкозернистого бетона класса B20 H=50мм	մ2	581.1	2476.530		2,476.53	1,439,111.58
34	Ինքնահարթեցնող շերտ H=5մմ ceresit CN68 (1մմ շերտին 1,5կգ)Самовыравнивающийся слой H=5мм Ceresit CN68 (1,5кг на 1мм слоя)	մ2	581.1	4216.310		4,216.31	2,450,097.74
35	Վինիլային հատակ H=2մմ, 0,7մմ պաշտպանիչ շերտով, ներառյալ վինիլային շրիշակները H=6մմ (394,4 գծմ) Виниловое напольное покрытие H=2 мм, с защитным слоем 0,7 мм, включая виниловые полосы H=6 см (394,4 погонных метров)	մ2	581.1	8612.660		8,612.66	5,004,816.73
36	Հարթաշերտ ցեմենտավազե շաղախից H=30մմ Плоскослойный цементный раствор H=30мм	մ2	74.50	1411.750		1,411.75	105,175.38
37	հատակների ջրամեկուսացում ցեմենտային ջրամեկուսիչ քսանյութով "Planiseal"88 Гидроизоляция полов цементной гидроизоляционной смесью «Planiseal»88	մ2	74.5	3374.680		3,374.68	251,413.66
38	հատակների երեսպատում խեցեալիկներով, տոսնձով Напольное покрытие плиткой, клей	մ2	74.5	8132.940		8,132.94	605,904.03
39	Աստիճանավանդակ Лестница Պողպատե խողովակներից բազրիքների տեղադրում, ներառյալ ամրացման տարրերը Монтаж перил из стальных труб, включая элементы крепления	գմ	35.0	12200.300		12,200.30	427,010.50
40	Բազրիքների երկշերտ յուղաներկում Двухслойная масляная живопись барельефов.	մ2	26.0	1525.330		1,525.33	39,658.58
41	Սանդղամատերի բազալտե սալերի փոխարինում Замена базальтовых плит на лестницах	մ2	8.0	25039.620		25,039.62	200,316.96
42	Աստիճանահարթակների և սանդղամատերի բազալտե սալերի հղկում Полировка базальтовых плит для ступеней и проступей лестниц	մ2	29.2	9604.970		9,604.97	280,465.12
43	Բազալտե շրիշակների փոխարինում (2մ2) (d=30մմ) Замена базальтовой плитки (2м2) (d=30мм)	գմ	20.0	1526.470		1,526.47	30,529.40
44	Այլումինե եզրաճաղերով բազրիքների տեղադրում H=1,2մ ներառյալ ամրացմ. տարրերը Монтаж алюминиевых перил H=1,2м включая крепеж. Элементы	գմ	4.4	17669.300		17,669.30	77,744.92
45	Ներքին հարդարման աշխատանքներ Внутренние отделочные работы Պատերի բարելավված սվաղ գաջե շաղախով սենյակների 20% (231,6+192,46)	մ2	424.0	2692.490		2,692.49	1,141,615.76
46	շեփերի սվաղ գաջե շաղախով (41+38,9) Штукатурка Шепари с гипсовым раствором (41+38,9)	մ2	79.9	5986.230		5,986.23	478,299.78

47	Պատերի քսահարթում գիպսոնիտե շաղախով Օштукатуривание стен гипсовой штукатуркой	մ2	1915.5	1417.240		1,417.24	2,714,723.22
48	Պատերի սվաղ ցեմենտավազե շաղախով հիդրոֆոր հավելումով (154,8+155,8)մ2 Штукатурка стен цементно-известковым раствором с гидрофобной добавкой (154,8+155,8)մ2	զմ	310.6	2735.580		2,735.58	849,671.15
49	Պատերի և թեքությունների ներկում լատեքսային ներկով, երկշերտ ծեփամածկմամբ (994,2+1016,7)մ2Окраска стен и откосов латексной краской, двухслойная штукатурка (994,2+1016,7)մ2	մ2	2010.9	1925.850		1,925.85	3,872,691.77
50	Պատերի երեսպատում հախճապակով (154,8+155,8)մ2 Облицовка стен глиняной плиткой (154,8+155,8)մ2	մ2	310.6	8147.020		8,147.02	2,530,464.41
51	Առաստաղների քսահարթում գիպսոնիտե շաղախով (484,5+324,6)Օштукатуривание потолков гипсовой штукатуркой (484,5+324,6)	մ2	809.1	1657.280		1,657.28	1,340,905.25
52	Առաստաղների ներկում լատեքսային ներկով, երկշերտ ծեփամածկմամբ (513,3+520,5)Պокраска потолков латексной краской, двухслойная шпатлевка (513,3+520,5)	մ2	1033.8	2287.030		2,287.03	2,364,331.61
53	Կախովի առաստաղ "Արմստրոնգով", ներառյալ հիմնակմախքը (147,2+118,8)մ2Подвесной потолок "Армстронг", включая подконструкцию (147,2+118,8)մ2	մ2	266.0	8696.900		8,696.90	2,313,375.40
54	Կախովի առաստաղ շերտավոր պլաստմասայից (PVC), ներառյալ հիմնակմախքը (27,5+30,2)մ2Подвесной потолок из ламинированного пластика (PBX), включая подконструкцию (27,5+30,2)մ2	մ2	57.7	8898.120		8,898.12	513,421.52
55	Օղափոխության հորանների երեսպատում գիպսասովարադրթե սալերով 9,5մմ հաստ. ցինկապատ պրոֆիլներից հիմնակմախքով, d=50մմ հանք. բամբակյա միջադիրով Обшивка вентиляционных шахт гипсокартонными листами толщиной 9,5 мм. с каркасом из оцинкованных профилей, вал d=50мм. с ватным диском	մ2	19.5	5901.100		5,901.10	115,071.45
56	Դռներ ալյումինե (արտաքին) (3 հատ) Алюминиевые двери (внешние) (3 шт.) Արտաքին ալյումինե դռան բլով մուգ մոխրագույն պրոֆիլներից, ջերմակամրջակով, ապակեփաթեթով (բացվող մասեր) (3 հատ)Наружный алюминиевый дверной блок из темно-серых профилей, с терморазрывом, стеклопакет (открывающиеся части) (3 шт.)	մ2	10.89	117335.480		117,335.48	1,277,783.38
57	Նույն դռների վերնափեղկեր և միջնափեղկեր (չբացվող մասեր) Верхняя и средняя панели одной двери (открывающиеся части)	մ2	4.11	57494.390		57,494.39	236,301.94

58	Հակախտւմապային փական ինքնաձաձկվող մեխանիզմով Антипанический клапан с самозакрывающимся механизмом	կ-տ	1	34181.230		34,181.23	34,181.23
59	դռներով զուգարանախցիկների իրականացում սանհանգույցներում այլումինե հիմնականախցով ցունված (մԴՖ) Դուռ և բռնակ 10հատ Изготовление туалетных кабинок с дверцами в ванных комнатах, заполненных алюминиевой рамой (МДФ), дверь и ручка 10 шт.	մ2	37.90	49280.900		49,280.90	1,867,746.11
